ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4
« 11 » մարտ 2020թ.-ին կնքված N ՎԱՇՎՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/7-1 ծածկագրով՝
Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման
պետական գնման պայմանագրի

ք.Երևան « 23 » 01 2023 թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ Վազգեն Կարապետյանի (Լիազորագիր տրված 22.08.2022), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, և Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավար Ա.Կոտոլյանի (այսուհետ՝ Ծառայություն ստացող), որը գործում է մարմնի կանոնադրության հիման վրա, բոլորը միասին՝ կողմեր հիմք ընդունելով «ՎԱՇՎՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/7-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով, որ 2023թ. պետական բյուջեով համապատասխան ծառայությունների մատուցման նպատակով հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել ֆինանսական պարտավորությունները և Վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2023թ-ի հունվարի 1-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 31-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև այն ուժի մեջ մտնելը Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ, ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից մատուցած ծառայության դիմաց վճարումը իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ
Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական մասնաբաժին Հ/Հ 90001024099 ՀՎՀՀ 02505554	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ք.Երևան,Ազատության պ. 24/1 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163004038879 ՀՎՀՀ 02500052	Շուկայի վերահսկողության տեսչական մարմին ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2 ՀՎՀՀ 00190146
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 11 » մարտի 2020թ. կնքված
***«ՎԱՇՎՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/7-1»** ծածկագրով պայմանագրի*
« 23 » 01 2023թ. կնքված N 4 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64211100/7	Հանրային հեռախոսային ծառայություններ	-	60 000	60 000	135 000	135 000	135 000	210 000	210 000	210 000	300 000	300 000	300 000	300 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024099
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
ք.Երևան, Ազատության պ. 24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038879
ՀՎՀՀ 02500052

(ստորագրություն)

Կ.Տ.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ
Շուկայի վերահսկողության տեսչական մարմին
ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2
ՀՎՀՀ 00190146

(ստորագրություն)

Կ.Տ.